Ի. Ալիևի կողմից COP29-ում բաց թողնված հնարավորության մասին

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 30.11.2024 թ.[1]

Չնայած միջազգային փորձագետների կողմից COP29-ի արդյունքների վերաբերյալ արված թերահավատ գնահատականներին, Բաքուն փորձում է ցույց տալ, որ համաժողովը լիովին արդյունավետ էր ինչպես համաշխարհային կլիմայական օրակարգի, այնպես էլ Ադրբեջանին հետաքրքրող տարածաշրջանային բնապահպանական խնդիրների առումով: Վերջինիս նկատմամբ Բաքուն ցուցաբերում է հատուկ հետաքրքրություն, քանի որ Ի. Ալիևի վարչակարգի համար կարևոր է համոզել իր հասարակությանը, որ կլիմայական գագաթնաժողովի կազմակերպման համար ծախսված զգալի ֆինանսական միջոցներն ու Բաքվի բնակիչներին պատճառված մեծածավալ անհարմարությունները լիովին արդարացված էին:

Հույսեր կապելով COP29-ի շուրջ մեծ արձագանքի հետ՝ Բաքուն փորձում էր համաժողովը վերածել անձամբ Իլհամ Ալիևին գովազդելու գործիքի և Ադրբեջանի միջազգային կշիռը բարձրացնելու հարթակի: Սակայն սպասվող մասնակիցների վերջնական կազմը հիասթափեցրեց ադրբեջանական իշխանություններին: Համաժողովին մասնակցեցին միայն երկու կարևոր առաջնորդներ՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Քիր Սթարմերը և Թուրքիայի նախագահ Ռեջեփ Էրդողանը: Սակայն նրանց ներկայությունը, պայմանավորված Անկարայի և Լոնդոնի հետ Բաքվի հատուկ կապերով, միջոցառմանը ցնցող տպավորություն չհավելեց:

Արդեն գագաթնաժողովի բացման օրը՝ 12.11.2024-ին, պարզ դարձավ, որ COP29-ը չի դառնա միջազգային կլիմայական օրակարգի կարևորագույն սկզբնակետ, քանի որ հիմնական երկրների պատվիրակությունների մակարդակը բացառեց գլոբալ «Բնապահպանական հիմնադրամի» ստեղծման վերաբերյալ համաձայնության հասնելու հեռանկարը: Այս հիմնադրամի ստեղծումը, որի մեկնարկային գումարը պիտի կազմեր 1 տրիլիոն ԱՄՆ դոլար և հետագայում ավելացվեր մինչև 2,5 տրիլիոն դոլար, ի սկզբանե համարվում էր COP29-ի հիմնական նպատակը, որը որոշ համաշխարհային լրատվամիջոցներ բնութագրել էին որպես «*ֆինանսական գագաթնաժողով*»: Հիմնադրամի հիմնական ենթադրյալ նվիրատուների միջև փոխհամաձայնության բացակայությունը զգացվեց Բաքվում միջոցառման մեկնարկից դեռևս շատ առաջ, և համաձայնության հասնելու հեռանկարի բացակայությունը ստիպեց աշխարհի ամենաազդեցիկ առաջնորդներին հրաժարվել Ադրբեջան մեկնելուց:

Բաքվում, ինչպես արդեն նշվել է, նախընտրեցին քողարկել համաժողովի գլոբալ օրակարգի ձախողումը և առաջ մղել Ադրբեջանի սեփական «հաջողությունները», որոնք իբր արձանագրվել են COP29-ի արդյունքներով: Մասնավորապես, Ադրբեջանի ՋԼՄ-

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 29.11.2024 թ.:

ները շեշտում են համաժողովի շրջանակներում երկու համաձայնագրերի ստորագրումը, որոնք պետք է արմատապես փոխեն հանրապետության դերն ու տեղը համաշխարհային «էկոլոգիական քարտեզի» վրա, ինչպես նաև նպաստեն դրա տնտեսական աճին: Խոսքը, այսպես կոչված, «*կանաչ անցման*» ծրագրերի մասին է, որոնցից մեկը նախատեսում է Ադրբեջանի մասնակցությունը «*կանաչ էներգիայի*» տարանցման գործընթացում, իսկ մյուսը՝ դրա արտադրությունում: Այսպես, գագաթնաժողովի շրջանակներում ստորագրվել է համաձայնագիր Բաքվի, Տաշքենդի, Աստանայի և Սաուդյան Արաբիայի *ACWA Power* ընկերության միջև՝ Կենտրոնական Ասիայից Կասպից ծովի հատակով դեպի Ադրբեջան «*կանաչ մալուխ*» անցկացնելու վերաբերյալ, որից հետո այն պետք է միանա «*Սևծովյան մալուխին*», որը ձգվելու է Վրաստանից Եվրոպա:

Մեկ այլ իրադարձություն, որը Բաքուն ներկայացնում է որպես հաջողություն, դարձավ Ադրբեջանի պետական նավթային ընկերության *SOCAR Green*-ի, *Masdar* ընկերության (ԱՄԷ), Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի և Ասիական ենթակառուցվածքային ներդրումների բանկի միջև ստորագրված բազմակողմ համաձայնագիրը: Փաստաթուղթը կարգավորում է երկու արևային էլեկտրակայանների (ԱԷԿ) ֆինանսավորումը Բիլասուվարում և Նեֆթեչալայում՝ ընդհանուր 758 ՄՎտ հզորությամբ և 670 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ:

Այս երկու ծրագրերն իսկապես կարևոր են Ադրբեջանի համար, սակայն դրանց շուրջ պայմանավորվածություններն արդեն եղել էին COP29-ից շատ առաջ, և դրանց ստորագրումը կարող էր տեղի ունենալ շատ ավելի վաղ: Ակնհայտ է, որ Ի. Ալիևը համոզել է գործընկերներին հետաձգել ստորագրության արարողությունները կլիմայական համաժողովի համար՝ փորձելով բարձրացնել վերջինիս կարևորությունը ինչպես արտաքին աշխարհի, այնպես էլ ադրբեջանական հասարակության աչքերում:

Մինչդեռ Բաքվի քայլերը՝ Ադրբեջանի բնապահպանական խնդիրները լուծելու հարցում միջազգային հանրությանը ներգրավելու ուղղությամբ նույնպես հաջողություն չեն արձանագրել: COP29-ին բարձրացված՝ Կասպից ծովի փրկության հարցը ոչ միայն չգրավեց համաշխարհային կենտրոնների առանձնահատուկ ուշադրությունը, այլև բացահայտեց այս ջրավազանի խաթարված էկոլոգիական բալանսի աղետալի ծավալները: Համաժողովի քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ մերձկասպյան երկրները դեռևս հեռու են Կասպից ծովի ծանծաղացման և աղտոտման մարդածին պատճառների միասնական ըմբռնումից և, համապատասխանաբար, ջրավազանի փրկության ընդհանուր ռազմավարության մշակումից: Մինչ համաժողովը, մասնավորապես Ադրբեջանում ընդունված չէր խոսել այն մասին, որ ծովի ծանծաղացումը սպառնում է ոչ միայն երկրի բնապահպանությանը, այլև դրա տնտեսական և քաղաքական անվտանգությանը: COP29-ը նպաստեց

կանխատեսումների և փորձագիտական գնահատականների զանգվածային տարածմանը, համաձայն որոնց Կասպից ծովը, որը մինչև վերջերս նպաստում էր Ադրբեջանի զարգացմանը, շատ արագ կարող է վերածվել դրա «գերեզմանափորի»:

Ծովի ջրային մակերևույթի մակարդակը տարեկան նվազում է միջինը 70 սմ-ով և արդեն մոտենում է դիտարկումների ողջ ժամանակահատվածի ամենացածր ցուցանիշին (1977 թ.): Եթե այս միտումը պահպանվի, հանրապետության ափամերձ հողերին սպառնում է ողողամաշում, երկրի արևելյան շրջաններում կխախտվի կլիմայական բալանսը, մերձափնյա մակերեսային նավթագազային հանքերը կկորցնեն շահագործման բարենպաստ պայմանները և շահավետությունը, նավահանգստային ենթակառուցվածքները կհայտնվեն ծանծաղուտում, կանգ կառնի նավագնացությունը, դրանով իսկ զրոյացնելով տրանսկասպյան ապրանքափոխադրումների համակարգի ստեղծման ջանքերը՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» և «Հյուսիս–Հարավ» գլոբալ ծրագրերի շրջանակներում: Այսպիսով, Կասպից ծովի չորացումը, ըստ էության, «Դամոկլյան սուր» է Ադրբեջանի համար: Եվ այս սպառնալիքը COP29-ից հետո դարձել է շատ ավելի շոշափելի ադրբեջանական հասարակության համար, ինչը չի կարող չազդել հանրապետությունում սոցիալական տրամադրությունների վրա:

Այսպիսով, Իլհամ Ալիևը համաժողովի արդյունքներով գրեթե ոչինչ չունի պարծենալու ներքին և արտաքին լսարանների առջև: COP29-ը չդարձավ ոչ միայն նրա քաղաքական կարիերայի գագաթնակետը, այլև բացահայտեց հանրապետության առջև ծառացած բազմաթիվ խնդիրներ, որոնք խարխլում են թե՛ նրա բնապահպանական և տնտեսական իմիջը, և թե՛ իշխող վարչակարգի դիրքերը:

Միևնույն ժամանակ, մի շարք փորձագետների կարծիքով, Ադրբեջանը COP29-ում իրական հնարավորություններ ուներ հասնելու ավելի ընդունելի քաղաքական և իմիջային արդյունքների, եթե օգտագործեր այս հարթակը՝ Հայաստանի հետ հարաբերությունների իրական կարգավորման համար: Կարծիք կա, որ հենց Ի. Ալիևի չկամությունը՝ համաժողովի շրջանակներում Երևանի հետ ստորագրելու խաղաղության ինչ-որ շրջանակային փաստաթուղթ, հիմնականում էլ դարձել է Բաքվում կլիմայական գագաթնաժողովի նկատմամբ գլխավոր աշխարհաքաղաքական կենտրոնների թույլ ուշադրության պատճառը: Այս առաջնորդները համաժողովին ավելի բարեհաճ կլինեին, և այն ինքնին կդառնար նշանավոր նույնիսկ կլիմայական առումով, եթե Բաքուն դրսևորեր պատրաստակամություն՝ հաղթահարելու թշնամանքը և հրաժարվելու Երևանի նկատմամբ ի սկզբանե ակնհայտորեն անընդունելի պահանջներից: Այս առումով համաժողովի նկատմամբ ընդհանուր թերահավատությունը կարող է դիտարկվել նաև որպես համերաշխության դրսևորում Հայաստանի նկատմամբ, որին արևմտյան կենտրոններն առաջարկել են վերջնականապես հրաժարվել Լեռնային Ղարաբաղի

հարցում ունեցած «նկրտումներից»՝ ի պատասխան Բաքվի կողմից հաշտեցման ուղղությամբ փոխադարձ քայլերի:

Ամենայն հավանականությամբ, Ալիևը հասկանում է դա, բայց, ըստ երևույթին, ունի մի քանի պատճառ՝ այս քայլից հրաժարվելու կամ այն որոշակի ժամանակով հետաձգելու համար: Պատճառները կարող են լինել ինչպես անձնական, այնպես էլ աշխարհաքաղաքական բնույթի:

Առաջին հերթին, վաղուց է պարզ, որ Ի. Ալիևը հիացած է իր հաղթանակներով Լեռնային Ղարաբաղում և դրա արդյունքում արդեն կորցնում է Ադրբեջանի հնարավորությունների ու իրական չափի զգացողությունը: Զգալով այս փուլում ռազմական-քաղաքական գերազանցությունը Երևանի նկատմամբ, նա չի ընդունում ստեղծված ստատուս քվոն՝ որպես «զրոյական կետ» Հայաստանի հետ նոր հարաբերություններ կերտելու համար: Նրա կարծիքով, Ադրբեջանը դեռ ունի ներուժ՝ գործերի ընթացքը դեպի Երևանի ավելի մեծ զիջումների կողմ շարժելու համար և, համապատասխանաբար, դեռ չկա բավարար միջազգային դիմադրություն այս քաղաքականության նկատմամբ:

Մյուս կողմից, կարծիք կա, որ համաժողովում խաղաղության ձևակերպումից նրա հրաժարվելը օտարերկրյա քաղաքական գործընկերների ազդեցության արդյունք է: Մասնավորապես, խոսքը կարող է վերաբերվել ՌԴ-ին, որին՝ տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացների տրամաբանությամբ, ամենաքիչն է շահեկան Ադրբեջանի և Հայաստանի միջև հաշտությունը և կառուցողական հարաբերությունները: Քանի դեռ հայ-ադրբեջանական հարաբերություններում չի հաստատվել փոխադարձ ընդունելի «զրոյական կետը», Մոսկվան կարող է վստահ լինել տարածաշրջանում իր որոշակի ազդեցության պահպանման և, համապատասխանաբար, Արևմտյան բլոկի՝ Հարավային Կովկասում հիմնովին հաստատվել չկարողանալու մեջ: Ուկրաինայի հարցում իրավիճակի բարդացման ֆոնին Ռուսաստանին իսկապես ձեռնտու կլիներ «սառեցնել» հայ-ադրբեջանական ուղու վրա «*ոչ պատերազմ, ոչ խաղաղություն*» իրավիճակը և սպասել ավելի բարենպաստ ժամանակների և պայմանների՝ հայ-ադրբեջանական վաղեմի վեճում կրկին գլխավոր արբիտրի դեր ստանձնելու համար: Ըստ երևույթին, Մոսկվայի նման դիրքորոշումը ընդունելի է թվում Ի. Ալիևի համար, որը իր անձնական փառասիրությունից բացի, նաև այլ արդարացումներ ունի Արևմուտքի առջև՝ Հայաստանի հետ հաշտվելու իր ցանկության բացակայության համար: Սա նրան թույլ է տալիս իր անհամաձայնության «մեղքը» բարդել Մոսկվայի, վերջինիցս իր օբյեկտիվ կախվածության վրա և, դրանով իսկ, ստանալ լրացուցիչ ժամանակ՝ Երևանի հանդեպ ճնշում գործադրելու համար: Ըստ Ի. Ալիևի, տարածաշրջանի և աշխարհի աշխարհաքաղաքական իրականությունն այնպիսին է, որ Բաքվին ցանկացած պահի կարող է իրական հնարավորություն ընձեռվել

«յուրացնելու» Հայաստանն ամբողջությամբ, այլ ոչ թե նրա նույնիսկ ամենամեծ զիջումները:

Արդյունքում, Ի. Ալիևի այս սպասումները գերազանցեցին COP29 համաժողովում Արևմուտքից «հաղթանակ» և «խաղաղության դափնիներ» ստանալու հեռանկարները, որի հետ համաձայնելու համար նրան երկար ժամանակ փորձում էին համոզել Վաշինգտոնն ու Բրյուսելը: Այժմ, սակայն, Բաքուն մեծ ռիսկի տակ է, քանի որ Հարավային Կովկասում և, ընդհանուր առմամբ, Առաջավոր Ասիայում գործընթացների հարացույցում կարող է նույն հաջողությամբ բերել Ի. Ալիևի կողմից ակնկալվող իրողություններին ամբողջությամբ հակառակ սցենարներին: Եվ այդ դեպքում, «*անպտուղ*» COP29 համաժողովը կամ ցանկացած այլ հարթակ, որը նրան առաջարկվել է որպես հնարավորություն՝ Հայաստանի հետ հակամարտությունը դադարեցնելու, կարող են դառնալ Ադրբեջանի քաղաքականության համար ճակատագրական բացթողում:

Հայ-ադրբեջանական հակամարտության ծագման հետ ծանոթ փորձագետների կարծիքով, ի տարբերություն իր իրավահաջորդի, Ալիև-ավագը հազիվ թե այդպիսի հնարավորությունը բաց թողներ: Նա կգտներ դիվանագիտական մեթոդներ՝ Ռուսաստանին համոզելու, որ Ադրբեջանի համար այլ ճանապարհ չկա: Բայց Իլհամ Ալիևը, ի տարբերություն իր հաշվենկատ բյուրոկրատ հորից, իր բնույթով և երիտասարդ տարիների հարուստ փորձով հուզաշարժ խաղացող է, ինչը կարելի է իմանալ ադրբեջանական ընդդիմադիր աղբյուրներից: Ըստ ամենայնի, «արդեն շահածը» վերցնելուց հրաժարվելն ու ձգտումը ամբողջ շահադրույքը վերցնելու ռիսկին իսկապես նրա տարերքն ու կրեդոն է: Նախկինում նրա մեծ պարտքերը խաղատներում հենց նրա հայրն էր վճարում: Հնարավոր է, այսօրվա քաղաքական խաղի արդյունքներով, Ալիև-կրտսերի պարտքերը ստիպված կլինի ծածկել ադրբեջանական հասարակությունը: